



ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

EIMC N17-1/16
Տարեկան 2016



ՀԱՅԷԿՈՄՈՆԻՏՈՐԻՆԳ

(ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ)

ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ
ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք



• ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ

• ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ

• ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐ



<http://www.armmonitoring.am>

Բովանդակություն

ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ.....	4
Երևան.....	4
Գյումրի.....	9
Վանաձոր.....	10
Ալավերդի.....	11
Հրազդան.....	14
Արարատ.....	17
Մթնոլորտային օդի դիտարկումները հանրապետության տարբեր բնակավայրերում....	18
ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐ.....	20
ՀՀ գետերի ջրի քիմիական որակը 2016թ.-ին.....	20
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք.....	29
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք.....	29
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք.....	30
Սևանի ջրավազանային կառավարման տարածք.....	31
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք.....	31
Հարավային ջրավազանային կառավարման տարածք.....	31
ՀՀ ջրամբարների ջրի քիմիական որակը 2016թ.-ին.....	33
Արաքս գետ.....	35
Սևանա լիճ.....	40
«Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր (EMEP)».....	58
Մթնոլորտային օդում որոշվող ցուցանիշների ցանկ.....	63
Մակերևութային ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ.....	63
Տեղումներում որոշվող ցուցանիշների ցանկ.....	64
Մթնոլորտային օդում որոշ աղտոտիչների ՍԹԿ-ներ.....	65
Էկոլոգիական նորմեր.....	66
Մակերևութային ջրերի աղտոտվածության չափանիշներ.....	67
«Արտակարգ բարձր աղտոտվածություն» և «բարձր աղտոտվածություն» արտահայտությունների սահմանումը.....	68

ՕՂԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ

2016 թվականի ընթացքում օդային ավազանի որակի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Կապան, Քաջարան, Չարենցավան, Մարտունի քաղաքներում և Սյունիք գյուղական համայնքում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործել է պասիվ նմուշառման 216 դիտակետ և 16 ստացիոնար դիտակայան, որոնցից 6 ստացիոնար դիտակայանում (Երևան և Ալավերդի քաղաքներում) կատարվել են շուրջօրյա ավտոմատ դիտարկումներ:

Գործող 16 դիտակայանի միջոցով ակտիվ եղանակով վերցված օդի 17171 փորձանմուշում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Երևան քաղաքի փոշու որոշ փորձանմուշներում որոշվել են մետաղների պարունակությունը: Հանրապետության 11 քաղաքում տեղադրված պասիվ նմուշառման 216 դիտակետից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար վերցվել է օդի 20059 փորձանմուշ: Երևան և Ալավերդի քաղաքներում տեղադրված կայաններում ավտոմատ դիտարկումների միջոցով կատարվել է համապատասխանաբար 338996 և 110797 դիտարկում:

Հիմնական ծրագրի շրջանակներում ընդհանուր առմամբ վերցվել է օդի 37230 փորձանմուշ, որոշվել՝ 491060 ցուցանիշ:

Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Կապան, Քաջարան, Չարենցավան, Մարտունի, Ծաղկաձոր քաղաքների և Սյունիք գյուղական համայնքի մթնոլորտում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական և միջին շաբաթական կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզներն՝ ըստ պասիվ նմուշառիչների տվյալների, հասանելի են <http://www.armmonitoring.am/> ինտերնետային կայքում:

Երևան

2016 թվականին Երևան քաղաքում կատարվել են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործել է պասիվ նմուշառման 47 դիտակետ և յոթ դիտակայան (№1, №2, №7, №8, №16-1 №18 և №19), որից երկուսում՝ №2 և №18 կատարվել են միայն ակտիվ (24-ժամյա), իսկ մնացած հինգ դիտակայանում (№1, №7, №8, №16-1 և №19)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:



2016 թվականի ընթացքում Երևանում ակտիվ նմուշառմամբ վերցվել է օդի 9509, պասիվ նմուշառմամբ՝ 4169 փորձանմուշ, ավտոմատ եղանակով կատարվել է 338996 դիտարկում: Ածխածնի մոնօքսիդի տարվա առավելագույն կոնցենտրացիան դիտվել է նոյեմբերի 10-ին ժամը 19⁴⁵-ին՝ 13.13 մգ/մ³, ծծմբի երկօքսիդինը՝ փետրվարի 2-ին ժամը 15³⁰-ին՝ 2.93 մգ/մ³ (Կենտրոն համայնք):

Որոշված ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՍԹԿ):

Ակտիվ նմուշառման եղանակով դիտարկումների արդյունքները Երևանում.

Որոշվող միացություն (դիտակայանի քանակ)	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³ (դիտակայանի համար)	ՍԹԿ-ից գերազանցումների քանակ		Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ ³	ՍԹԿ միջին օրական, մգ/մ ³
		>1 ՍԹԿ	>5 ՍԹԿ		
Ծծմբի երկօքսիդ (7)	0.156 (դիտ. N2)	27	-	0.028	0.05
Ազոտի երկօքսիդ (7)	0.131 (դիտ. N18)	321	-	0.023	0.04
Փոշի (7)	0.603 (դիտ. N19)	328	-	0.095	0.15
Գետնամերձ օզոն (7)	0.036 (դիտ. N1)	1	-	0.005	0.03


Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները (ակտիվ նմուշառում).




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ընդհանուր փոշու մեջ որոշված ծանր մետաղների
միջին տարեկան կենցենտրացիաները

Ցուցանիշ	Միավոր	Ամիս												Տարեկան
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Fe	մկգ/մ ³	0.11	0.08	0.07	0.18	0.04	0.06	0.14	0.15	0.19	0.20	0.18	0.23	0.14
Co	նգ/մ ³	0.07	0.05	0.16	0.15	0.06	0.04	0.11	0.06	0.11	0.11	0.03	0.13	0.09
Ni	նգ/մ ³	1.72	3.29	2.99	4.18	1.42	2.02	1.30	2.03	4.65	4.89	2.47	1.00	2.66
Cu	մկգ/մ ³	0.011	0.006	0.014	0.010	0.005	0.005	0.017	0.009	0.017	0.010	0.008	0.013	0.011
Zn	նգ/մ ³	54.9	60.8	63.0	86.2	45.7	24.7	25.9	17.3	77.7	27.7	25.5	38.4	45.65
As	նգ/մ ³	0.07	0.04	0.10	0.23	0.05	0.07	0.12	0.11	0.18	0.13	0.11	0.01	0.10
Mo	նգ/մ ³	2.10	4.20	1.67	3.51	1.88	2.71	1.04	1.15	2.06	1.67	0.64	5.76	2.37
Cd	նգ/մ ³	0.08	0.07	0.13	0.13	0.06	0.05	0.12	0.11	0.21	0.11	0.17	0.31	0.13
Pb	նգ/մ ³	3.52	2.14	4.03	5.59	2.29	2.18	2.80	1.55	4.33	6.89	0.81	5.32	3.45

Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO₂) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածությունը /ըստ պասիվ նմուշառիչների տվյալների/ 2016/ԵՐԵՎԱՆ



Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածությունը /ըստ պասիվ նմուշառիչների տվյալների/ 2016/ԵՐԵՎԱՆ




Գյումրի

2016 թվականին Գյումրի քաղաքում կատարվել են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործել է ակտիվ նմուշառման մեկ դիտակայան և պասիվ նմուշառման 24 դիտակետ:

Ակտիվ (24-ժամյա) նմուշառմամբ վերցվել է օդի 355, իսկ պասիվ նմուշառմամբ՝ 2389 փորձանմուշ:

Ծծմբի երկօքսիդի և փոշու միջին տարեկան կոնցենտրացիաները գերազանցել են համապատասխան ՄԹԿ-ները 1.4 և 1.2 անգամ: Ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիան ՄԹԿ-ն չի գերազանցել:




Վանաձոր

Վանաձոր քաղաքում կատարվել են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: 2016 թվականին քաղաքում գործել է ակտիվ նմուշառման երեք դիտակայան և պասիվ նմուշառման 24 դիտակետ:

Ակտիվ (24-ժամյա) նմուշառմամբ վերցվել է օդի 3189, պասիվ նմուշառմամբ՝ 2384 փորձանմուշ:

Ծծմբի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.4 անգամ: Ազոտի երկօքսիդի և փոշու միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Ալավերդի

2016 թվականի ընթացքում Ալավերդի քաղաքում կատարվել են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և ածխածնի մոնօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործել է ակտիվ նմուշառման երեք դիտակայան և պասիվ նմուշառման 38 դիտակետ:


Ակտիվ (24-ժամյա) նմուշառմամբ վերցվել է օդի 2719, պասիվ նմուշառմամբ՝ 3706 փորձանմուշ, ավտոմատ դիտարկումների կայանում կատարվել է 110797 դիտարկում:

Ածխածնի մոնօքսիդի տարվա առավելագույն կոնցենտրացիան դիտվել է սեպտեմբերի 28-ին ժամը 20¹⁵-ին՝ 4.86 մգ/մ³, ազոտի մոնօքսիդինը՝ փետրվարի 26-ին ժամը 23⁰⁰-ին՝ 0.02 մգ/մ³:

Ծծմբի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն 2.4 անգամ: Որոշված մյուս ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Բենդիկ



Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO₂) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածությունը /ըստ պասիվ նմուշառիչների տվյալների/ 2016/Ա.Լ.Ա.Վ.Ե.Բ.Դ.Ի



0 0.6 1.2 2.4 3.6 4.8 կմ

Բենդիկ

Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO₂) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածությունը /ըստ պասիվ նմուշառիչների տվյալների/ 2016/ Ա Լ Ա Վ Ե Ր Դ Ի



Պայմանանշաններ

- Գետային ցանց
- Հանապարհներ և փողոցներ
- Միջպետական ճանապարհ
- Երկաթգծեր
- Բնակավայրերի սահման
- ⬠ Պասիվ նմուշառման դիտակետեր
- ⬡ Ակտիվ նմուշառման դիտակետեր

Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ³)

0.005
0.02
0.03
0.04
0.05
0.07



Հրազդան


2016 թվականի ընթացքում Հրազդան քաղաքում կատարվել են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործել է ակտիվ նմուշառման մեկ դիտակայան և պասիվ նմուշառման 17 դիտակետ:


Ակտիվ (24-ժամյա) նմուշառմամբ վերցվել է օդի 1040, պասիվ նմուշառմամբ՝ 1723 փորձանմուշ:

Որոշված ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները (ակտիվ նմուշառում) .








Արարատ

2016 թվականի ընթացքում Արարատ քաղաքում կատարվել են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործել է ակտիվ նմուշառման մեկ դիտակայան և պասիվ նմուշառման 12 դիտակետ:

Ակտիվ (24-ժամյա) նմուշառմամբ վերցվել է օդի 359, պասիվ նմուշառմամբ՝ 1216 փորձանմուշ:

Որոշված ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:





Մթնոլորտային օդի դիտարկումները հանրապետության տարբեր բնակավայրերում

2016 թվականի ընթացքում պասիվ նմուշառիչներով օդային ավազանի դիտարկումներ կատարվել են հանրապետության Կապան, Քաջարան, Չարենցավան, Մարտունի քաղաքներում, Սյունիք գյուղական համայնքում: Վերցված օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները:

Կապան քաղաքի 11 դիտակետում տեղադրված պասիվ նմուշառիչներով վերցվել է օդի 911 փորձանմուշ, Քաջարան քաղաքի 15 դիտակետից՝ 1228 փորձանմուշ, Չարենցավան քաղաքի 10 դիտակետից՝ 994 փորձանմուշ, Մարտունի քաղաքի 10 դիտակետից՝ 607 փորձանմուշ, Սյունիք գյուղական համայնքի 9 դիտակետից՝ 732 փորձանմուշ:

Նշված բնակավայրերի մթնոլորտում որոշված ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:


Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները ըստ տարբեր բնակավայրերի (պասիվ նմուշառում)։



ՀՀ մակերևութային ջրերի քիմիական որակը 2016 թվականին



2016թ.-ին ՀՀ գետերի և ջրամբարների ջրի քիմիական որակի նկարագիրը (դիտակետերի ընդհանուր թիվ՝ 103)



ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐ

2016 թվականի ընթացքում մակերևութային ջրերի որակի դիտարկումներ իրականացվել են հանրապետության 41 գետի, Արփա-Սևան թունելի, Արփի լճի, Ախուրյանի, Ապարանի, Ագատի, Կեչուտի ջրամբարների, Երևանյան և Սևանա լճերի 131 դիտակետում, որտեղից վերցվել է 966 փորձանմուշ: Վերցված փորձանմուշներում որոշվել է 40320 ցուցանիշ: Իրականացված դիտարկումների արդյունքները բերված են աղյուսակներում:

ՀՀ կառավարության «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Եթե մակերևութային ջրային մարմնի որակի տարբեր ցուցանիշներ ընկնում են որակի տարբեր դասերի մեջ, ապա վերջնական դասակարգման մեջ հաշվի է առնվում վատագույնը: Օրինակ՝ եթե կոնկրետ ջրային մարմնի մեկ ցուցանիշ ցույց է տալիս «անբավարար» (4-րդ դաս) դասի կարգավիճակ, իսկ մնացած բոլորը ցույց են տալիս ավելի լավ կարգավիճակ, ապա այդ ջրային մարմինը դասակարգվում է «անբավարար» կարգավիճակի դասին (4-րդ դաս): Գործում է հետևյալ սկզբունքը. «Եթե մեկը վատ վիճակում է, ապա բոլորն են վատ վիճակում»:

ՀՀ գետերի ջրի քիմիական որակը 2016թ.-ին

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հյուսիսային	Փամբակ	0,5 կմ գյ. Հարթազյուղից վերև (1)	-	2-րդ	2-րդ
		0,5 կմ ք. Սպիտակից ներքև (2)	ԸԱԱ	3-րդ	4-րդ
			Նիտրատ իոն	4-րդ	
	0,6 կմ ք. Վանաձորից վերև (3)	Նիտրատ իոն, ԸԱԱ, կախված մասնիկներ	3-րդ	3-րդ	
	Փամբակ	4,5 կմ ք. Վանաձորից ներքև (4)	ԹՔՊ, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ԸԱԱ, կախված մասնիկներ	3-րդ	5-րդ
			Նիտրիտ իոն	4-րդ	
Ամոնիում իոն			5-րդ		

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս	
Հյուսիսային	Դեբեդ	0,5 կմ Մարցիգետ գետի թափման կետից ներքև (5)	Նիտրատ իոն	3-րդ	3-րդ	
		0,5 կմ ք. Այրումից վերև (6)	Նիտրատ իոն	3-րդ	5-րդ	
			Կախված մասնիկներ	4-րդ		
			Մոլիբդեն	5-րդ		
		Սահմանի մոտ (7)	Նիտրատ իոն	3-րդ	5-րդ	
			Կախված մասնիկներ	4-րդ		
			Մոլիբդեն	5-րդ		
		Չորագետ	0,5 կմ ք. Ստեփանավանից վերև (8)	–	2-րդ	2-րդ
			Գետաբերան (10)	–	2-րդ	2-րդ
	Տաշիր	0,5 կմ գյ. Միխայելովկայից վերև (11)	ԹՔՊ	3-րդ	3-րդ	
		0,5 կմ գյ. Սարատովկայից ներքև (12)	ԹՔՊ, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ	
	Մարցիգետ	Գետաբերան (13)	–	2-րդ	2-րդ	
	Ախթալա	Գետաբերան (14)	Նիտրատ իոն, երկաթ, հանքայնացում	3-րդ	5-րդ	
			Կոբալտ	4-րդ		
			Ցինկ, պղինձ, կադմիում, մոլիբդեն, մանգան, սուլֆատ իոն, կախված մասնիկներ	5-րդ		
	Գարգառ	Ակունք (210)	–	2-րդ	2-րդ	
		Գետաբերան (342)	–	2-րդ	2-րդ	
	Շնող	Գետաբերան (343)	ԹՔՊ, երկաթ, հանքայնացում	3-րդ	5-րդ	
			Նիտրիտ իոն, սուլֆատ իոն, կախված մասնիկներ	4-րդ		
			Մոլիբդեն	5-րդ		
	Աղստև	1,2 կմ ք. Դիլիջանից վերև (15)	–	2-րդ	2-րդ	

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հյուսիսային	Աղստև	0,5 կմ ք. Դիլիջանից ներքև (16)	–	2-րդ	2-րդ
		1 կմ ք. Իջևանից վերև (17)	–	2-րդ	2-րդ
		Սահմանի մոտ (18)	–	2-րդ	2-րդ
	Գետիկ	0,5 կմ ք. Ճամբարակից վերև (19)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (20)	–	2-րդ	2-րդ
Ախուրյանի	Ախուրյան	0,5 կմ գյ. Ամասիայից վերև (31)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, երկաթ, կախված մասնիկներ	3-րդ	3-րդ
		1 կմ գյ. Ամասիայից ներքև (32)	Ֆոսֆատ իոն, երկաթ, կախված մասնիկներ	3-րդ	3-րդ
		0,8 կմ ք. Գյումրիից վերև (33)	Ֆոսֆատ իոն	3-րդ	4-րդ
			Երկաթ, կախված մասնիկներ	4-րդ	
		5 կմ ք. Գյումրիից ներքև (34)	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մոլիբդեն, ՇԱԱ	3-րդ	4-րդ
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն, երկաթ, կախված մասնիկներ	4-րդ	
	0,5 կմ գյ. Երվանդաշատից ներքև (35)	ԹՔՊ, կախված մասնիկներ	3-րդ	3-րդ	
	Աշոցք	0,5 կմ գյ. Արտաշենից վերև (36)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (37)	Արսեն	3-րդ	3-րդ
	Կարկաչուն	Գետաբերան (38)	ԹԿՊ ₅ , ԹՔՊ, նիտրատ իոն, մանգան, ՇԱԱ, հանքայնացում, կախված մասնիկներ	3-րդ	5-րդ
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն, մոլիբդեն, ընդհանուր ֆոսֆոր, սուլֆատ իոն, Ֆոսֆատ իոն	4-րդ	
Ֆոսֆատ իոն			5-րդ		

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Ախուրյանի	Մեծամոր	10 կմ ք. Վաղարշապատից հարավ (40)	Լուծված թթվածին, ԹՔՊ, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
			Ամոնիում իոն, Նիտրիտ իոն, սուլֆատ իոն	4-րդ	
		11 կմ ք. Վաղարշապատից հարավ-արևելք (41)	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրատ իոն, մանգան, ԸԱԱ, սուլֆատ իոն	3-րդ	4-րդ
			Լուծված թթվածին, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	4-րդ	
		0,5 կմ գյ. Ռանչպարից ներքև (42)	ԹՔՊ, նիտրիտ իոն, նիտրատ իոն, մանգան, բոր	3-րդ	3-րդ
		Հրազդանի	Քասախ	0,5 կմ ք. Ապարանից վերև (43)	–
0,5 կմ ք. Ապարանից ներքև (44)	ԹՔՊ, ԸԱԱ			3-րդ	5-րդ
	Ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր			4-րդ	
	Ամոնիում իոն			5-րդ	
1 կմ ք. Աշտարակից վերև (45)	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն			3-րդ	3-րդ
3,5 կմ ք. Աշտարակից ներքև (46)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն			3-րդ	3-րդ
Գետաբերան (47)	Ֆոսֆատ իոն, վանադիում, ԸԱԱ, հանքայնացում			3-րդ	4-րդ
	Նիտրատ իոն			4-րդ	
Գեղարոտ	0,5 կմ գյ. Արագածից վերև (48)		Մանգան	3-րդ	3-րդ

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս		
Հրազդանի	Գեղարոտ	Գետաբերան (49)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, ԸԱԱ, կածված մասնիկներ	3-րդ	4-րդ		
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն, նիտրատ իոն	4-րդ			
	Հախվերդ	0,5 կմ գյ. Փարպիից ներքև (50)	Ֆոսֆատ իոն, վանադիում	3-րդ	3-րդ		
	Հրազդան	Հրազդան	գյ. Գեղամավանի մոտ (51)	–	2-րդ	2-րդ	
			0,5 կմ գյ. Քաղսիից ներքև (52)	ԹՔՊ, մանգան, վանադիում	3-րդ	3-րդ	
			0,5 կմ գյ. Արգելից ներքև (53)	ԹՔՊ, մանգան, վանադիում, քլորիդ իոն	3-րդ	3-րդ	
			0,5 կմ Արգնի ՀԷԿ-ից ներքև (54)	Նիտրատ իոն, վանադիում, ԸԱԱ, հանքայնացում	3-րդ	3-րդ	
			6 կմ ք. Երևանից ներքև. գյ. Դարբնիկի մոտ (55)	Հանքայնացում, կախված մասնիկներ	3-րդ	5-րդ	
				ԹՔՊ, կոբալտ	4-րդ		
				Լուծված թթվածին, ԹԿՊ ₅ , ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	5-րդ		
			Գետաբերան (56)	Գետաբերան (56)	ԹՔՊ, նիտրատ իոն, վանադիում, ընդհանուր ֆոսֆոր, քլորիդ իոն, հանքայնացում	3-րդ	5-րդ
					Լուծված թթվածին, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, ԸԱԱ	4-րդ	
					Ամոնիում իոն	5-րդ	

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս		
Հրազդանի	Հրազդան	գյ. Գեղանիստ (225)	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրատ իոն, վանադիում, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, քլորիդ իոն, սուլֆատ իոն, հանքայնացում	3-րդ	4-րդ		
			Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մանգան	4-րդ			
	Գետառ	Գետաբերան (59)	ԹՔՊ, մանգան, վանադիում, քլորիդ իոն, սուլֆատ իոն, հանքայնացում, կախված մասնիկներ	3-րդ	5-րդ		
			Նիտրատ իոն, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ			
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն, Ֆոսֆատ իոն	5-րդ			
	Մարմարիկ	0,5 կմ գյ. Հանքավանից վերև (57)	–	–	2-րդ	2-րդ	
		Գետաբերան (58)	Մանգան, երկաթ	–	3-րդ	3-րդ	
	Սևանի	Ձկնագետ	0,5 կմ գյ. Մեմյոնովկայից վերև (60)	–	–	2-րդ	2-րդ
			Գետաբերան (61)	–	–	2-րդ	2-րդ
		Մասրիկ	0,5 կմ գյ. Վերին Շորժայից վերև (62)	–	–	2-րդ	2-րդ
Գետաբերան (63)			Նիտրատ իոն, վանադիում	–	3-րդ	3-րդ	
Սոթք		0,5 կմ հանքավայրից վերև (64)	–	–	2-րդ	2-րդ	
		Գետաբերան (65)	Նիտրատ իոն, ԸԱԱ	–	3-րդ	3-րդ	

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Սևանի	Կարճաղբյուր	0,5 կմ գյ. Աղբյուրաձորից վերև (66)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (67)	–	2-րդ	2-րդ
	Վարդենիս	0,5 կմ գյ. Վարդենիկից վերև (69)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (70)	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
	Մարտունի	0,5 կմ գյ. Գեղահովիտից վերև (71)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (72)	Ամոնիում իոն	3-րդ	3-րդ
	Արգիճի	0,5 կմ գյ. Լեռնակերտից վերև (73)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (74)	–	2-րդ	2-րդ
	Ծակքար	Գետաբերան (75)	Նիտրատ իոն	3-րդ	3-րդ
	Շողվակ	Գետաբերան (76)	ԹՔՊ	3-րդ	3-րդ
	Գավառագետ	0,5 կմ գյ. Ծաղկավանից վերև (77)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (78)	ԹՔՊ, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, վանադիում, ԸԱԱ	3-րդ	3-րդ
Արարատյան	Վեղի	0,5 կմ գյ. Ուրցաձորից վերև (80)	–	2-րդ	2-րդ
		2 կմ ք. Արարատից ներքև (82)	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր, կախված մասնիկներ	3-րդ	3-րդ
	Արփա	0,5 կմ ք. Ջերմուկից վերև (83)	–	2-րդ	2-րդ
		0,5 կմ ք. Վայքից վերև (84)	–	2-րդ	2-րդ
		0,5 կմ ք. Վայքից ներքև (85)	–	2-րդ	2-րդ
		0,5 կմ ք. Եղեգնաձորից վերև (86)	–	2-րդ	2-րդ
		0,5 կմ գյ. Արենիից ներքև (87)	–	2-րդ	2-րդ
	Եղեգիս	0,5 կմ գյ. Շատինից ներքև (88)	–	2-րդ	2-րդ
	Արփա-Սևան թունել	0,7 կմ գյ. Ծովինարից վերև (68)	Նիտրատ իոն	3-րդ	3-րդ

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հարավային	Մեղրիգետ	0,5 կմ ք. Մեղրիից վերև (89)	–	2-րդ	2-րդ
		Գետաբերան (90)	Նիտրիտ իոն	3-րդ	4-րդ
			Ամոնիում իոն	4-րդ	
	Կարճևան	Գետաբերան (344)	Ամոնիում իոն, պղինձ, կադմիում, ալյումին, հանքայնացում	3-րդ	5-րդ
			ԹԿՊ, ԹՔՊ, վանադիում, կոբալտ, երկաթ	4-րդ	
			Մալիբդեն, մանգան, սուլֆատ իոն, կախված մասնիկներ	5-րդ	
	Ողջի	1,8 կմ ք. Քաջարանից վերև (91)	–	2-րդ	2-րդ
			1,8 կմ ք. Քաջարանից ներքև (92)	Ամոնիում իոն, վանադիում, երկաթ, ՇԱԱ, հանքայնացում	3-րդ
		Մանգան, կոբալտ, կախված մասնիկներ		4-րդ	
		Մոլիբդեն		5-րդ	
		0,8 կմ ք. Կապանից վերև (93)	Մոլիբդեն	3-րդ	3-րդ
		6,8 կմ ք. Կապանից ներքև (94)	Ամոնիում իոն, ցինկ, երկաթ, կախված մասնիկներ	3-րդ	5-րդ
			Պղինձ, մանգան, կոբալտ	5-րդ	
	Արծվանիկ	0,5 կմ պոչամբարից վերև (95)	–	2-րդ	2-րդ

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս	
Հարավային	Արծվանիկ	Գետաբերան (96)	Նիտրիտ իոն, կադմիում, երկաթ, հանքայնացում	3-րդ	5-րդ	
			Կոբալտ, սուլֆատ իոն	4-րդ		
			Մոլիբդեն, մանգան, վանադիում, կախված մասնիկներ	5-րդ		
	Գեղի	0,5 կմ գյ. Աջաբաջից վերև (97)	Գետաբերան (98)	–	2-րդ	2-րդ
			–	–	2-րդ	2-րդ
	Որոտան	0,5 կմ գյ. Գորայքից վերև (99)	0,5 կմ գյ. Գորայքից վերև (99)	–	2-րդ	2-րդ
			1 կմ ք. Սիսիանից վերև (100)	Վանադիում	3-րդ	3-րդ
			3 կմ ք. Սիսիանից ներքև (101)	Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
			0,5 կմ գյ. Տաթև ՀԷԿ-ից ներքև (102)	–	2-րդ	2-րդ
			–	–	–	–
	Սիսիան	0,5 կմ գյ. Արևիսից վերև (103)	Գետաբերան (104)	–	2-րդ	2-րդ
			Մանգան Մոլիբդեն	3-րդ 4-րդ	4-րդ	
	Գորիսգետ	3 կմ ք. Գորիսից վերև (106)	1,5 կմ ք. Գորիսից ներքև (107)	–	2-րդ	2-րդ
			ԹՔՊ, նիտրատ իոն	3-րդ	5-րդ	
			ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ		
	–	–	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	5-րդ		

1 -րդ դաս՝ «գերազանց» քիմիական որակ, 2 -րդ դաս՝ «լավ» քիմիական որակ, 3 -րդ դաս՝ «միջակ» քիմիական որակ, 4 -րդ դաս՝ «անբավարար» քիմիական որակ, 5 -րդ դաս՝ «վատ» քիմիական որակ

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Փամբակ գետի ջուրը Հարթագյուղից վերև հատվածում «լավ» որակի է (2-րդ դաս), Սպիտակ քաղաքից ներքև՝ «անբավարար» որակի է (4-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով, Վանաձոր քաղաքից վերև հատվածում՝ «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով, ընդհանուր անօրգանական ազոտով և կախված մասնիկներով, Վանաձոր քաղաքից ներքև հատվածում՝ «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով:

Դեբեդ գետի՝ Մարցիգետ գետի թափման կետից ներքև հատվածում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով: Դեբեդ գետի Այրումից վերև և սահմանի մոտ հատվածներում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Չորագետ գետի ջուրը ողջ հոսանքում «լավ» որակի է (2-րդ դաս):

Տաշիր գետի վերին և ստորին հոսանքում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս). Միխայելովկայից վերև հատվածում՝ պայմանավորված ԹՔՊ-ով, Սարատովկայից ներքև հատվածում՝ պայմանավորված ԹՔՊ-ով, նիտրատ և ֆոսֆատ իոններով:

Մարցիգետ գետի գետաբերանի հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս):

Ախթալա գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ցինկով, պղնձով, կադմիումով, մոլիբդենով, մանգանով, սուլֆատ իոնով և կախված մասնիկներով:

Գարգառ գետի ջուրը ողջ հոսանքում «լավ» որակի է (2-րդ դաս):

Շնող գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Աղստև գետի ջուրը ողջ հոսանքում «լավ» որակի է (2-րդ դաս):

Գետիկ գետի ջուրը ողջ հոսանքում «լավ» որակի է (2-րդ դաս):

Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք

Ախուրյան գետի Ամասիայից վերև և ներքև, ինչպես նաև Երվանդաշատից ներքև հատվածներում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս). Ամասիայից վերև՝ պայմանավորված ԹՔՊ-ով, ֆոսֆատ իոնով, երկաթով և կախված մասնիկներով, Ամասիայից ներքև՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, երկաթով և կախված մասնիկներով, Երվանդաշատից ներքև՝ պայմանավորված ԹՔՊ-ով և կախված մասնիկներով, Գյումրի քաղաքից վերև և ներքև հատվածներում՝ «անբավարար» որակի է (4-րդ դաս). Գյումրիից վերև՝ պայմանավորված երկաթով և կախված մասնիկներով, Գյումրիից ներքև՝ պայմանավորված ամոնիում և նիտրիտ իոններով, երկաթով և կախված մասնիկներով:

Աշոցք գետի Արտաշենից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված արսենով:

Կարկաչուն գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով:

Մեծամոր գետի Վաղարշապատից հարավ և հարավ-արևելք ջուրը «անբավարար» որակի է (4-րդ դաս). Վաղարշապատից հարավ՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ և

սուլֆատ իոններով, Վաղարշապատից հարավ-արևելք՝ պայմանավորված լուծված թթվածնով, նիտրիտ և ֆոսֆատ իոններով, Ռանչպար գյուղից ներքև՝ «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված ԹՔՊ-ով, նիտրիտ և նիտրատ իոններով, մանգանով և բորով:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Քասախ գետի Ապարան քաղաքից վերև «լավ» որակի է (2-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև՝ «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, Աշտարակից վերև և ներքև հատվածներում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս). Աշտարակից վերև՝ պայմանավորված նիտրատ և ֆոսֆատ իոններով, Աշտարակից ներքև՝ պայմանավորված ԹՔՊ-ով և ֆոսֆատ իոններով, գետաբերանի հատվածում ջուրը «անբավարար» որակի է (4-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով:

Գեղարոտ գետի Արագած գյուղից վերև հատվածում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, գետաբերանի հատվածում՝ «անբավարար» որակի է (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ և նիտրատ իոններով:

Հախվերդ գետի Փարպի գյուղից ներքև հատվածում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով և վանադիումով:

Հրազդան գետի Գեղամավանի մոտ հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև և Արգնի ՀԷԿ-ից ներքև հատվածներում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս). Քաղսի գյուղից ներքև՝ պայմանավորված ԹՔՊ-ով, մանգանով և վանադիումով, Արգել գյուղից ներքև՝ պայմանավորված ԹՔՊ-ով, մանգանով, վանադիումով և քլորիդ իոնով, Արգնի ՀԷԿ-ից ներքև՝ պայմանավորված նիտրատ իոնով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և հանքայնացումով: Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ և գետաբերանի հատվածներում Հրազդան գետի ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս). Դարբնիկ գյուղի մոտ հատվածում՝ պայմանավորված լուծված թթվածնով, ԹԿՊ₅-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանի հատվածում՝ պայմանավորված ամոնիում իոնով, Գեղանիստ գյուղի մոտ ջուրը «անբավարար» որակի է (4-րդ դաս)՝ պայմանավորված նիտրիտ և ֆոսֆատ իոններով, մանգանով:

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ և ֆոսֆատ իոններով:

Մարմարիկ գետի Հանքավանից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով և երկաթով:

Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Ձկնագետ գետի ողջ հոսանքում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս):

Մասրիկ գետի Վերին Շորժա գյուղից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով և վանադիումով:

Սոթք գետի հանքավայրից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով և ընդհանուր անօրգանական ազոտով:

Կարճաղբյուր գետի ողջ հոսանքում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս):

Վարդենիս գետի վերին հոսանքում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ և ֆոսֆատ իոններով:

Մարտունի գետի վերին հոսանքում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով:

Արգիճի գետի ողջ հոսանքում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս):

Ծակքար գետի գետաբերանի հատվածում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով:

Շողվակ գետի գետաբերանի հատվածում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված ԹՔՊ-ով:

Գավառագետ գետի վերին հոսանքում՝ գյուղ Ծաղկավանից վերև հատվածում, ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ԹՔՊ-ով, նիտրատ և ֆոսֆատ իոններով, վանադիումով և ընդհանուր անօրգանական ազոտով:

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Վեդի գետի Ուրցաձոր գյուղից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ Արարատից ներքև հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով, ընդհանուր ֆոսֆորով և կախված մասնիկներով:

Արփա գետի ողջ հոսանքում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս):

Եղեգիս գետի Շատին գյուղից ներքև ընկած հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս):

Արփա-Սևան թունելի ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով:

Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մեղրիգետի՝ Մեղրիից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով:

Կարճևան գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով, մանգանով, սուլֆատ իոնով և կախված մասնիկներով:

Ողջի գետի Քաջարան քաղաքից վերև ընկած հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ Քաջարանից ներքև և Կապանից ներքև ընկած հատվածներում՝ «վատ» (5-րդ դաս)։ Քաջարանից ներքև՝ պայմանավորված մոլիբդենով, Կապանից ներքև՝ պայմանավորված պղնձով, մանգանով և կոբալտով, Կապանից վերև հատվածում՝ «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով։

Արծվանիկ գետի վերին հոսանքում՝ պոչամբարից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով, մանգանով, վանադիումով և կախված մասնիկներով։

Գեղի գետի ողջ հոսանքում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս)։

Որոտան գետի Գորայքից վերև և Տաթև ՀԷԿ-ից ներքև հատվածներում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), Միսիանից վերև և ներքև՝ «միջակ» որակի է (3-րդ դաս)։ Միսիանից վերև՝ պայմանավորված վանադիումով, Միսիանից ներքև՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով։

Միսիան գետի Արևիս գյուղից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով։

Գորիսգետի վերին հոսանքում՝ Գորիս քաղաքից վերև հատվածում, ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ Գորիսից ներքև հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ և ֆոսֆատ իոններով։

ՀՀ ջրամբարների ջրի քիմիական որակը 2016թ.-ին

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշ ի դասը	Ջրի որակի ընդհանրակա ն դասը
Արփի լճի ջրամբար	ամբարտակի մոտ (109)	–	2-րդ	2-րդ
Ախուրյանի ջրամբար	ամբարտակի մոտ (110)	ԹՔՊ	3-րդ	3-րդ
Ապարանի ջրամբար	ամբարտակի մոտ (111)	ԹՔՊ	3-րդ	3-րդ
Երևանյան լիճ	ամբարտակի մոտ (112)	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ՇԱԱ, ընդհանու ր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
		Նիտրիտ իոն	4-րդ	
Ազատի ջրամբար	ամբարտակի մոտ (113)	–	2-րդ	2-րդ
Կեչուտի ջրամբար	ամբարտակի մոտ (114)	ԹՔՊ	3-րդ	3-րդ

ՀՀ ջրամբարների ջրի քիմիական որակի գնահատումը կատարվել է համաձայն ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերի (ՀՀ կառավարության 2011թ.-ի հունվարի 27-ի N 75-Ն որոշման հավելված N2):

Արաքս գետի քիմիական որակի մոնիտորինգի արդյունքները 2016թ.-ին

№	Դիտակետի տեղադրություն	Նմուշների քանակ	Գերազանցում	Լուծված թթվածին	ԹԿ ⁵	ՍԹԿ=3 մգ/լ	ՍԹԿ=30 մգ/լ	Ամոնիում իոն, ՍԹԿ=0.39 մգN/լ	Նիտրիտ իոն, ՍԹԿ=0.024 մգN/լ	Սուլֆատ իոն, ՍԹԿ=100 մգ/լ	Նատրիում, ՍԹԿ=120 մգ/լ	Մագնեզիում, ՍԹԿ=40 մգ/լ	Պղինձ, ՍԹԿ=0.001 մգ/լ	Քրոմ, ՍԹԿ=0.001 մգ/լ	Մանգան, ՍԹԿ=0.01 մգ/լ	Վանադիում, ՍԹԿ=0.001 մգ/լ	Ալյումին, ՍԹԿ=0.04 մգ/լ	Սելեն, ՍԹԿ=0.001 մգ/լ
				ՍԹԿ>6մգ/լ	ՍԹԿ=3 մգ/լ	ՍԹԿ=30 մգ/լ	ՍԹԿ=0.39 մգN/լ	ՍԹԿ=100 մգ/լ	ՍԹԿ=120 մգ/լ	ՍԹԿ=40 մգ/լ	ՍԹԿ=0.001 մգ/լ	ՍԹԿ=0.001 մգ/լ	ՍԹԿ=0.01 մգ/լ	ՍԹԿ=0.001 մգ/լ	ՍԹԿ=0.04 մգ/լ	ՍԹԿ=0.001 մգ/լ		
25	Սուրմալու գյուղի դիմաց	8	ՍԹԿ-ն գերազանցող դեպքերի քանակ	-	2	2	-	2	-	-	-	-	8	5	3	8	5	-
			Միջին տարեկան կոնցենտրացիայի գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	2,1	2,0	2,0	6,6
26	Հրազդան գետի թափ. կետից վերև	11	ՍԹԿ-ն գերազանցող դեպքերի քանակ	3	2	2	9	9	6	-	1	10	11	9	11	9	9	9
			Միջին տարեկան կոնցենտրացիայի գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)	-	-	-	2.2	5.1	-	-	-	-	-	-	2,1	4,2	2,7	10,1
27	Հրազդան գետի թափ. կետից ներքև	11	ՍԹԿ-ն գերազանցող դեպքերի քանակ	3	1	6	11	11	7	-	2	10	11	10	10	11	8	9
			Միջին տարեկան կոնցենտրացիայի գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)	-	-	-	3.8	6.8	1,3	-	-	-	-	-	2,2	4,4	2,5	12,0
28	0,5 կմ Արմաշ գյուղից ներքև	11	ՍԹԿ-ն գերազանցող դեպքերի քանակ	2	1	2	2	10	7	-	1	11	11	7	11	10	9	9
			Միջին տարեկան կոնցենտրացիայի գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)	-	-	-	-	6.2	1,3	-	-	-	-	-	2,4	4,3	1,9	12,0
29	2 կմ ք. Ագարակից հարավ	10	ՍԹԿ-ն գերազանցող դեպքերի քանակ	-	3	4	-	5	10	1	1	10	10	4	10	9	8	8
			Միջին տարեկան կոնցենտրացիայի գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)	-	-	-	-	1.4	1.9	-	-	-	-	-	2,4	4,8	1,2	12,9
30	2,5 կմ ք. Ագարակից հարավ-արևելք	10	ՍԹԿ-ն գերազանցող դեպքերի քանակ	-	2	5	1	5	10	1	2	10	10	2	10	7	8	8
			Միջին տարեկան կոնցենտրացիայի գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)	-	-	1,2	-	1,6	1.9	-	-	-	-	-	6,2	5,1	-	13,3

Արաքս գետ

Արաքս գետի 6 դիտակետից վերցված փորձանմուշներում որոշված ցուցանիշներից, ըստ ձկնատնտեսական նորմերով գնահատման, գերազանցվել են ԹԿՊ₅-ի, ԹՔՊ-ի, ամոնիում, նիտրիտ, սուլֆատ իոնների, պղնձի, քրոմի, մանգանի, վանադիումի, ալյումինի և սելենի ՍԹԿ-ները: Գետից վերցված փորձանմուշներում դիտվում է վանադիումով բարձր աղտոտվածություն: Վանադիումի ՍԹԿ-ն գերազանցվել է 10.1-13.3 անգամ (բացառությամբ 25 դիտակետի փորձանմուշի):

Արաքս գետի Մուրմալու գյուղի դիմաց հատվածում 6.6 անգամ գերազանցվել է վանադիումի, 2.1 անգամ՝ պղնձի, 2.0 անգամ՝ քրոմի և մանգանի, 2.5 անգամ՝ ալյումինի համապատասխան ՍԹԿ-ները:

